

**-ՈՒՄ ԱՄՍԱՆՑՈՎ ԲԱՅԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՈՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԶՆՎԵՐԸ
ՓԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԱՄՍԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ժամանակակից գրական հայերենի լեզվական կառուցվածքի տարբերմակարգակներում գործառույթ են մեծ թվով բառային, քերականական և այլ զուգաձևություններ, որոնց քննությունն անհրաժեշտ է լեզվի նորմավորման հարցերի լուսաբանման և զարգացման միտումների բացահայտման ու գնահատման տեսակետից:

Քերականական (ձևաբանական) զուգաձևերից են գոյականի հոլովի կարգում գործող -ում ածանցով բայանունների՝ եզակի սեռական-տրական և գործիական հոլովաձևերի կազմության տարբերակները. օրինակ՝ «Գումեշը... րացարձակ երանության և ինքնամոռաց նվիրումի տարերքի մեջ է» (ԳԹ, 18. V. 1979), «Այո, տղան ողջ էությամբ նվիրման բարձր աստիճանով կառնած է իր րաժին աշխարհի այդ անկյանը...» (նույն տեղում): «Յուրաքանչյուր աստիճանում դասակարգման հիմունքի միասնության պայմանում, կամ դասակարգիչ մեկ էական հատկանիշի կիրառմամբ ստանում է համարյա թե նույն խոսքի մասերը» (ՀԲ, ՀԽՄՈՒ, էջ 265) և այլն:

Հայերենի քերականագիտական աշխատություններում այս բայանունների հոլովման քննության կապակցությամբ արվել են նաև առանձին դիտողություններ տարբերակների առկայության, դրանց փոխհարաբերության բնույթի և գործառույթյան ուղորտների վերաբերյալ, երբեմն էլ տրվել են զուգաձևության զարգացման ընթացքը կանխատեսող բնութագրումներ:

Ս. Պալասանյանը նշում է, որ ան հոլովման պատկանող -ում (ումն) վերջավորությամբ բառերը «կարող են անխտիր հոլովիլ և առաջին կանոնավոր հոլովման վրա. վերջինը ավելի ընտանեկան լեզվի մեջ. օժման և օծումի, խավարման և խավարումի, խոստամար և խոստումով: Ամեն մարդ ճանաչում է ուսման օգուտը: Որդուս ուսումի տվի»¹: Պալասանյանի լեզվում բայանունների նշված հոլովաձևերը համապատասխանում են նրա ներկայացրած ճարգում բառի հարացույցի ձևերին՝ սեռական-տրականի ան, գործիականի ր վերջավորությամբ: Պետք է ենթադրել, որ նա «ընտանեկան» (խոսակցական) լեզվի ձևերը գրական լեզվում հանձնարարելի չի համարում:

Մ. Աբեղյանը և հիմքադրող բառերի հոլովման փոփոխության մասին գրում է. «Գրաբարի ան» բունն ունեցող անունները կորցնելով բնի այս բաղաձայնը՝ մասամբ արգեն շուռ են եկել «ի» հոլովման, ինչպես՝ ոտն, մատն, սերմն, մասն և այլն դարձել են՝ ոտ, մատ, սերմ, մաս. ոտի, մատի, սերմի, մասի. ձեռի, կաթի, ալի, արեգակի և այլն: ...Այս բառերը, մասամբ սեռական-տրականն ունին հին «Ան» կազմությամբ, ինչպես՝ գառան, դռան, եղան,

¹ Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1906, էջ 109—110:

մկան, նուան: Այսպես նաև Ում (հին՝ ումն) ածանցով կազմվածները՝ ուսում- ուսման, խավարում-խավարման և այլն²: Բայանունների սեռական-տրակա- նը հեղինակի լեզվում նշված աշխատության մեջ ունի զուգաձև կազմություն՝ ան-ով ձևերի գերակշռությամբ. հեգումի, ընդհատումի (էջ 91), պայթումի, բուլացումի (92), շրջումի (98), առնմանումին (105), տարբերակումին (167), լրացումի (204) և այլն:

Գործիականի ով վերջավորությունը Աբեղյանը ընդհանուր է համարում բոլոր բառերի համար³: Նրա գործածած բայանունների այդ հոլովաձևն իր տեսության համաձայն ունի միայն ով վերջավորությունը:

2. Աճառյանը նշում է —ում ածանցով բառերի տարբեր հոլովների զուգա- ձև կազմության առանձնահատկություններն ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գրական տարբերակներում. «—Ում հանգող գոյականները սեռա- կանում լինում են սզմամբ—ման. ինչ. խավարման, շարժման, համբարձման, քաղման, կործանման և այլն: Այս ձևերը արևմտահայոց մեջ ավելի սովորա- կան են, քան առաջին հոլովման համաձայն՝ խավարումի, շարժումի, համ- բարձումի, քաղումի, կործանումի և այլն: Հակառակն է արևելահայ գրակա- նում, որ ավելի սովորական է —ումի, քան —ման ձևը (շարժումի, քան շարժ- ման): Բացառականը երկու գրականում էլ առաջին հոլովման համաձայն է լինում (շարժումէ, շարժումից). գործիականը արևմտահայ գրականում լի- նում է երկու ձևով՝ —մամբ և —ումով (շարժմամբ, շարժումով), իսկ արևելա- հայ գրականում՝ ավելի —ումով ձևն է սովորական: Ներգոյականը ընդունված չէ և ասում են —ման մեջ կամ —ումի մեջ (շարժման մեջ, շարժումի մեջ և ոչ թե՛ շարժումում)⁴: Հեղինակային կիրառություններում բայանունների սեռա- կան-տրականի վերջավորությունը ան-ն է, իսկ գործիականում առկա է զու- գաձեություն. անկումով (էջ 398), հուլովմամբ (402):

Գ. Սևակը —ում-ով բառերի գործիականի վերջավորությունը համարում է գրաբարյան բ-ն⁵, սակայն նշված աշխատության մեջ առկա է գործիականի զուգաձև կազմություն. ուրվագծումով (էջ 323), հապավումով (185), զեղչու- մով (191), անկումով (302), ծագումով (174), մթագնումով (176) և ուռչ- մամբ (265), հավելմամբ (273), դրսևորմամբ (264) և այլն:

է. Աղայանը —ում ածանցով անունների գործիականի բ-ով ձևը համարում է հնաբանություն⁶ և հետևողականորեն գործածում է միայն ով վերջավորու- թյամբ ձևեր:

Հայոց լեզվի դպրոցական դասագրքում⁷ ընդունվում է բայանունների գործիականի երկու վերջավորություն և նշվում, որ ով-ը ավելանում է ուղղա- կանի անհնչյունափոխ, իսկ բ-ն՝ սեռականի հնչյունափոխված ձևերի վրա:

«Ժամանակակից հայոց լեզու» աշխատության II հատորում նշվում է ան հոլովման պատկանող շատ բառերի ի հոլովման ենթարկվելու միտումի

2 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 345:

3 Նույն տեղում, էջ 344:

4 Հ. Աճառյան, լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 700:

5 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 267—268:

6 է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 246:

7 է. Բ. Աղայան, Հ. Խ. Բարսեղյան, Հայոց լեզու, Երևան, 1968, էջ 124:

մասին, թեև ընդունվում է, որ «զրանց համար առայժմ առավել օրինաչափականը ան հոլովումն է»⁸:

Հարցի պատմության այս համառոտ քննությունից իսկ երևում է, որ բայանունների հոլովական զուգաձևությունը երբեմն չի հաղթահարվում նույնիսկ քերականագիտական այն աշխատություններում, որոնցում կանոնարկման առանձին փորձեր են արվում: Սա վկայում է այն մասին, որ քերականական ղուգաձևերը լեզվում ունեն իրենց գոյություն օբյեկտիվ հիմքը, և, որպես լեզվի կառուցվածքային հնարավորությամբ պայմանավորվող ձևեր, գործառում են մարդկանց կամքից ու գիտակցությունից անկախ:

Հայտնի է, որ բայանունները հին հայերենում ունեին —ումն ածանցը և հոլովվում էին ներդրական և հոլովմամբ. գործիականի վերջավորությունն էր բ-ն: Մինչև մեր դարի առաջին տասնամյակները —ումն-ի ն-ն պահպանվում էր որոշ բայանուններում, որի հետևանքով առաջանում էին բառային ղուգաձևեր. օրինակ՝ մեցումն (ԳՎ, ՊՔ, էջ 43), կատարումն (Շիրվ., ԵԺ, հ. 4, էջ 66), ծագումն (ՀԹ, ԵԺ, հ. 4, էջ 204), խզումն, գլորումն (ԵԶ, ԵԺ, հ. 6, էջ 10), բաժանումն, դրսևորումն (ԴԴ, ԵԺ, հ. 3, էջ 415), զիջումն (ՍԶ, ԵԺ, հ. 10, էջ 55) և այլն: Ներկայումս այս ղուգաձևությունը չի գործում: —ումն-ով ձևվերը գեղարվեստական գրականության լեզվում գործածվում են միայն ոճական նկատառումներով:

XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներում գրական հայերենի գործառական տարբեր ոճերում —ումն ածանցով բայանունների գործածությունը սահմանափակ էր: Դրանց փոխարեն ավելի տարածված էին անորոշ դերբայով կազմությունները: Օրինակ՝ «Մի կրոնա-կուլտուրական գործանշողության էր հանդիպում ի գերև հանելով նույնիսկ այնպիսի անհրաժեշտ և կարևոր մի հանգամանք, որպիսին էր աշխարհիկ լեզվի հիմնելն ու տարածելը» (ԳՎ, ՊՔ, էջ 115—116): «Պիտի վերջ տրվի մարդու միջոցով մարգուն շահագործելը» (Իս., էջ 220): «Եվ ինչ արժեք կունենա նրա գործադրությունը և ընդունելը մեր նոր իրականության մեջ» (ԽՀ, 3. V. 1921):

Ժամանակակից հայերենի ներկա փուլում բայանունների գործածությունը խիստ ընդարձակվել է. Վերջին ժամանակներս արևելահայ գրական լեզվում լայն տարածում է ստացել անորոշի փոխարեն բուն գոյական անունների գործածությունը՝ ոչ առանց ռուսերենի ազդեցության: Այս բանը հանգեցնում է վերացական արտահայտության հնարավորությունների ուժեղացման և, հասկանալի պատճառներով, առանձնապես լայն չափեր է ընդունում գիտական և պաշտոնական-գործարարական ոճերում⁹: Ելնելով գիտական ոճում բայանունների գործառության սահմանների ընդարձակման այս փաստից, սույն հոգվածում փորձել ենք ընել նաև այդ ոճում գործող տարբերակային ձևերի դրսևորման առանձնահատկությունները: Քանի որ գիտական գրականության մեջ բայանունների հոլովական տատանումների վերաբերյալ արտահայտվել են տարբեր, երբեմն հակադիր կարծիքներ, ճշգրիտ եզրակացու-

⁸ Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974, էջ 93.

⁹ Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 506.

թյունների հանգելու նպատակով անհրաժեշտության դեպքում կատարել ենք վիճակադրական քննություն:

Գիտական ոճն ընդհանուր առմամբ աչքի է ընկնում գրական նորմայի առավել ավանդապահությամբ: Այս իսկ պատճառով էլ բայանունների սեռական-տրականում գերազանցապես պահպանվում են կանոնական ան վերջավորությամբ կազմությունները:

Ի-ի ընդհանրականացման միտումն այս ոճում ունի միայն առանձին դրսևորումներ: Օրինակ՝ «Այս դեպքում էլ, սակայն, խախտվում է սահմանումի ճշգրտությունը» (էԱ, ԺՀՀԽ, էջ 79): «Վսեմի» ու «գեղեցիկի» վերացական անհասանելիությունը տեղի է տվել կյանքի ռեալիստական պատկերումին» (ՀՆԳՊ, հ. 3, էջ 75): «Հայերենի հոդերը... քննվում են առանց լրացուցիչ բացատրության ու վերապահումի» (ՀԲ, ՀԽՄՈՒ, էջ 288): «Արդյոք այդ լեզուն մերձակից է հայերենին, թե՞՝ երկար շփումի հետևանքով շատ րառեր հայերենից անցել են այդ լեզվին» (ՀԶ, 18. VIII. 1980):

Բայանունների ի-ով կիրառություններ ամենից ավելի հանդիպում են գրականագիտական, արվեստագիտական բնույթի աշխատանքներում: Օրինակ՝ «Առանց վառանումի՝ կարելի է ասել, որ այս շարքերը Ի. էլիրեկյանի մեծագույն նվաճումն են» (ԳԹ, 2. II. 1979): «Մենք հետևում ենք արտիստի յուրաքանչյուր մտքի փայլատակումին» (ԳԹ, 5. X. 1979): «Հարությունն իր սահղծագործական ծաղկումի մեջ է» (Գ, 1979, № 4, էջ 22) և այլն:

Գեղարվեստական գրականության ոճերում, հատկապես չափածո խոսքում, գեղարվեստական գրականության լեզվաոճական առանձնահատկությունների պահանջով ու թելադրմամբ (ոճերի ու ձևերի ընտրության ազատություն, ոճական անմիատարրություն, արտահայտչականություն, բարեհնչունություն, վանկաքանակի, հանդի և տաղաչափական այլ կանոնների պահպանման անհրաժեշտություն և այլն) ի-ով ձևերի գործառության սահմաններն ընդարձակվում են:

Հայ գեղարվեստական արձակում (ներառյալ և հուշագրությունը) բայանունների սեռական-տրականի տարրերակային ձևերի քանակային հարտրերությունը բացահայտելու համար կազմել և ստորև ներկայացնում ենք մի աղյուսակ, որտեղ գրի են առնվել ներկայացվող երկերում գործածված բոլոր տարրերակների միանգամյա կիրառությունները: Այդ զուգահեռ ձևերի զարգացման ընթացքը դարասկզբից մինչև մեր օրերը ներկայացնելու նպատակով աղյուսակը կազմել ենք ըստ հեղինակների ժամանակագրական հաջորդականության (աղյուսակ 1):

Ինչ հետևություններ կարելի է անել այս աղյուսակից. ա) գեղարվեստական արձակում ևս գերադանցում են բայանունների սեռական-տրականի ան-ով ընդհանրական կազմությունները, բ) ի-ով զուգաձևեր տարբեր չափերով գործածում են գրեթե բոլոր հեղինակները, գ) ի-ով ձևերն ավելի հանդիպում են բանաստեղծների արձակ ստեղծագործություններում, թեև որոշ արձակագիրների մոտ ևս առկա է ի-ով բառաձևերի գործածման հակում, դ) նկատվում են նաև զուգաձևերի նման հարաբերակցություններ դարասկզբի և ժամանակակից գրողների լեզվում: Դա բացատրվում է առհասարակ քերականական զուգաձևության դանդաղ փոփոխությամբ, քանի որ լեզվի կառուցվածքի կատարելագործման ու միասնականացման միտումին հակադրը-

վում է ավանդականորեն կանոնական համարվող ձևերի պահպանման միտումը: Բայանությունների ի-ով կիրառություններում որոշ շահով առկա է և արևմտահայ գրական նորմայի ազդեցությունը (տես աղ. № 1, Ս. Կապուտիկյան), անշուշտ գեր ունի և գրողի անհատական ոճական նախասիրությունը: Բայանությունների ի-ով ձևերն ազատորեն գործածվում են շահածո ստեղծագործություններում: Քանի որ այդ բառաձևերը մեկ ձայնավորով, հետևա-

Աղյուսակ 1

Աղբյուրներ	աճ-ով ձևեր	ի-ով ձևեր
Ալ. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1959	13	—
Նար-Դոս. Երկերի ժողովածու, հ. 3 («Մահը»), Երևան, 1955	24	1
Ավ. Իսահակյան, Երկեր, հ. 3, Երևան, 1959	23	9
Ե. Ջալեհ, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1966	28	9
Դ. Կեմուրճյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1977	18	1
Ս. Ջուրյան, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964	15	10
Ա. Բակունց, Երկեր, հ. 1, Երևան, 1976	13	4
Ն. Ջուրյան, Հացավան, Երևան, 1955	64	2
Գ. Մահաթի, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967	28	3
Վ. Թորոլենց, Կյանքը հին հոմեական ճանապարհի վրա, Երևան, 1964	7	3
Վ. Անանյան, Հին վրանի փոքրիկ ընկերը, Երևան, 1978	9	5
Ա. Կապուտիկյան, Խճանկար հոգու և քարտեզի գույներին, Երևան, 1976	78	51
Հ. Մաթևոսյան, Մառեր, Երևան, 1978	30	2
Հանգամանք՝	350	100

բար և մեկ վանկով *ալիլի* են աճ-ով ձևերից, *ալիլի* բարեհունչ են և աճ-ով սովորական, տարածված ձևերից ասարերվում են ձևային ինքնատիպությամբ, անհրաժեշտության դեպքում փոխարինում են այդ կազմություններին: Օրինակ՝

Խենթ հուզումի անուշ խոսքեր,
Պաղ մարդոցից խորը պահված,
Անջատման պես տխուր խոսքեր,
Հոգուս լույսեր մթնշաղված...¹⁰ (ՎՏ, էջ 11):
Մերթ գինեխենթ հարսանքատուն,
մերթ քաղումի թափոր,

¹⁰ Վ. Տերյանի բանաստեղծություններում բայանությունների սեռական-արական ձևերն ունեն ղուգած կազմություն՝ ի-ով ձևերի գերակշռությամբ. համա. հուզումի (ՎՏ, էջ 11), արքե-ցումի (12), մոռացումի (14), անկումիս (31), հիացումի (37), սոսկումի (46), բաղումի (48, 70), հանդիպումի (62, 196), հատուցումի (105), բաժանումի (107), թափառումի, մու-լորումի (180), բեկումիդ (228) և անջատման (11), մոռացման (65), միացմուն (100), հիացման (135), հուզման (346): Կարելի է վստահորեն ասել, որ շահածոյում բայանությունների ի-ով ձևերին առաջին լայն քաղաքացիություն տվողը մեզանում Վ. Տերյանն է:

Մերթ մոր կուրծք ես՝ մանկանց շրթին

մերթ անյունի սահոր (ՀՇ, ՔՀ, հ. 2, էջ 236):

Նա պարզել է ձեռքը անշեղ,

Տալիս է զարթնումի նշան (ԵԶ, ԾԺ, հ. 3, էջ 33):

Ձևերի նման ընտրությունն արվել է առաջին քառատողում՝ վանկաքանակի պահպանման, երկրորդում՝ հանգավորման նպատակով, երրորդ օրինակում ընտրվել է բարեհունչ ձևը:

Ի-ով ավելի հաճախ հոլովվում են գրքային, քիչ գործածվող կամ նորակերտ այն բայանունները, որոնց ան-ով հնչյունափոխված կազմությունները բաղաձայնների կուտակման հետևանքով անբարեհունչ են և երբեմն էլ ունեն բառի ելակետային ձևի անհասկություն. հմմտ. արյունման և արյունումի, զարթման և զարթումի, ճվման և ճվումի, սավառման և սավառումի, թրթման և թրթումի, մեկնման և մեկնումի, հսկման և հսկումի, զմայլման և զմայլումի, խռկման և խռկումի, գրկախառնման և գրկախառնումի, պղպղջման և պղպղջումի, զսպման և զսպումի և այլն¹¹:

Գրական տարբեր ոճերում ի-ով հանդես են գալիս ամենից ավելի մտածական, հուղազգացական և հարակից նշանակության բառերը. դրանցից են՝ հարցում, ճուշտում, ըմբռնում, դիտում, մտածում, իրարանցում, ընդլզում, լքում, ճակում, սպասում, զգացում, նվիրում, զմայլում, ճիացում, պոռթկում, խռկում և այլն:

Այսպիսով, գեղարվեստական գրականության, հատկապես չափածոյի լեզվում առկա են բայանունների սեռական-տրականի բավական շատ ի-ով գործածություններ, որոնք ան-ով ձևերի համեմատությամբ ունեն որոշ ոճական-կիրառական առանձնահատկություններ: Ի-ով ձևերը նույնպես կանոնական են, քանի որ գործառույթ են գրական նորմայի շրջանակներում և ի-ի տարածման միտումի արտահայտություններ են, սակայն ընդհանրական ձևեր չեն, ունեն գործառության ավելի նեղ ոլորտ և այս իմաստով էլ հավասարաթեք չեն ան-ով ձևերին:

Որոշ բայանունների ի-ով հոլովումը թելադրվում է ան-ով ձևերից իմաստային տարբերակմամբ առանձնանալու անհրաժեշտությամբ. հմմտ. անցման տարիք և անցումի լուսակիր, անձնագրի գրանցման կետ և «XX դարի հայ բանաստեղծի տողերում կա արձագանքը պատմահայր խորենացու անմահ գրանցումի» (ՍԿ, ԽՀՔԳ, էջ 191) և այլն:

Այժմ քննենք գործիականի տարբերակային ձևերի քանակային հարաբերակցությունը գեղարվեստական արձակում (աղյուսակ 2):

Աղյուսակից երևում է, որ ա) գեղարվեստական արձակում ընդհանրականն ու տարածվածը բայանունների ու վերջավորութայն գործիականն է, բ) մի շարք գրողները բ-ով ձևեր չեն գործածում, շատերի մոտ էլ կա ընդամենը մի քանի կիրառություն: Դրանք էլ հիմնականում մակբայացման միտում ունեցող բառերն են՝ դրդմամբ, բեազդմամբ, հիացմամբ և այլն: Միայն ա-

¹¹ Որոշ բայանունների սեռական-տրականի ձևերը համանուններ են կազմում ման-ով ածանցական ձևերի հետ. հմմտ. եռման ջուր (եռացող ջուր) և եռման կեա (եռալու կետ), ելման գետ (ելած գետ) և ելման դրություն (եկնելու դրություն) և այլն:

ռանձին գրողների ոճին է հատուկ բայանունների գործիականի ավանդական բ վերջավորությամբ կազմությունը:

Աղյուսակ 2

Աղբյուրներ	ռվ-ով ձևեր	բ-ով ձևեր
Ալ. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 4	—	5
Նար-Նու, Երկերի ժողովածու, հ. 3 («Մահը»)	12	1
Ավ. Խաճախյան, Երկեր, հ. 3	15	—
Ե. Ջառեմ, Երկերի ժողովածու, հ. 5	4	1
Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 2	9	2
Ս. Զառյան, Երկերի ժողովածու, հ. 10	11	—
Ա. Բակունց, Երկեր, հ. 1	1	—
Ե. Ջառյան, Հացավան	16	3
Գ. Մաճարի, Երկերի ժողովածու, հ. 2	11	—
Վ. Թաթևեց, Կյանքը հին հողմեական ճանապարհի վրա	2	—
Վ. Աճառյան, Հին վրանի փորձիկ ընկերը	5	3
Ս. Կապուտիկյան, Խճանկար հոգու և քարտեզի գույներին	38	9
Հ. Մաքեռյան, Մտերբեր	3	6
Ընդամենը՝	127	30

Իսկ ինչպիսին է այդ ձևերի փոխհարաբերությունը գիտական ոճում, Ստորև ներկայացվող աղյուսակում գործիականի տարբերակային ձևերն ընտրվել են քերականագիտական աշխատություններից. բավարարվել ենք 100 էջում գործածված բառաձևերի քանակով¹²:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, գիտական ոճում բայանունների գործիականի ռվ վերջավորությամբ ձևերի գերակշռությունը նշանակալից չէ: Գործիականի միաձև կազմություն առկա է միայն այն աշխատություններում, որոնց հեղինակները մշակել են գուգահեռ ձևերից միայն մեկը, ավելի տարածվածն ընդունելու համապատասխան տեսություն: Սակայն այդ կանոնարկումը, գործիականի միայն — ռվ վերջավորության ընդունումը չի վերացնում լեզվում դեռևս գործող այս երևույթը: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, քերականագետների մի մասը զուգահեռ ձևերից նախապատվությունը տալիս է բ-ով ձևերին:

Այսպիսով, գիտական ոճում բ-ով ավանդական ձևերը դեռևս բավական կենսունակ ու գործուն են:

12 Գրի չեն առնվել այն բայանունները, որոնք զուգահեռ հոլովում չունեն: Հայտնի է, որ գրաբարյան գործիականի բ վերջավորությամբ որոշ անուններ վերածվել են կապական բառերի կամ մակբայների, ինչպես, օրինակ, սխալմամբ, վերաբերմամբ, պատմմամբ, դիտմամբ, իրավամբ, եկատմամբ և այլն: Պահպանված նույնարմատ գոյականների գործիականը կազմվում է միայն ռվ վերջավորությամբ: Օրինակներ՝ Քերականական ձևերի ընտրությունը պատահարար և հատուկ դիտումով չի կառարվում (ՀԱ, ԼՔ, հ. 3, էջ 532): Իմ խղճի կամ համոզմանների հակառակ չեմ գնա երբեք և ոչ մի եկատումով (ՎՏ, էջ 651): Դիտմամբ և դիտումով, եկատմամբ և եկատումով ձևերը քերականաբար զուգահեռ համարվել չեն կարող, նկատի չենք առել նաև ընդհանուր առմամբ, այս առումով, այն առումով և նման կայուն բառակապակցությունները:

Աղյուսակ 3

Աղբյուրներ	ով-ով ձևեր	բ-ով ձևեր
Մ. Աբելյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965	10	—
Հ. Անադյան, Հիսկատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957	1	2
Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, հ. 1, Երևան, 1962	22	4
Ա. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975	18	1
Է. Ռ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967	12	—
Հ. Խ. Բաբսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980	2	27
Ռ. Ա. Խիսաբյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978	3	9
Գ. Ռ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974	7	16
Ընդամենը՝	75	59

Բայանունների գործիականի ով և բ վերջավորությամբ ձևերը հավասարապես զրական, կանոնական և իմաստային ու գործառական տեսակետից նույնարժեք են, սակայն բ-ով կազմություններն աստիճանաբար ստանում են ավելի վերացական արտահայտության ոճական արժեք։

Ընդհանուր առմամբ ժամանակակից հայերենի գործառական տարրեր ոճերում ընդհանրականացման միտում ունեն բայանունների գործիականի ով վերջավորությամբ կազմությունները։ Վերջին շրջանում պատճենմամբ ստեղծված մի շարք կայուն բառակապակցություններում բայանունների գործիականն ունի ով վերջավորությունը, որն այդ ձևի տարածման արտահայտություններից է. օրինակ՝ հիվանդանալ բոֆերի բուբոֆումով, կկատորություն վերջին նախագգուղացումով, հաճախել բեֆումով դպրոց և այլն։

Այսպիսով, —ում ածանցով բայանունների ի-ով ձևերն առավելապես գործառում են գեղարվեստական գրականության ոճերում, իսկ գործիականի ավանդական բ-ով ձևերը՝ գիտական ոճում։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ.—Գրություն (ամսագիր)։

ԳԹ.—Գրական թերթ։

ԳՎ, ԳԺ.—Գ. Վանցյան, Պատմական քերականություն արևելահայ լեզվի, Քիֆլիս, 1906։

ԿԴ, ԵԺ.—Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1977։

ԵԶ, ԵԺ.—Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1964, հ. 5, Երևան, 1966, հ. 6, Երևան, 1967։

ԷԱ, ԺՀՀ.—Է. Ռ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967։

Իս.—Ավ. Իսահակյան, Երկեր, հ. 3, Երևան, 1959։

ԽՀ—«Խորհրդային Հայաստան» (լրագիր):

ՀԱ. ԼԲ—Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի. հ. 3, Երևան, 1957:

ՀԹ, ԵԺ—Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1969:

ՀՐ, ՀԽՍՈՒ—Հ. Խ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980:

ՀԶ—«Հայրենիքի ձայն» (շաբաթաթերթ):

ՀՆԳՊ—«Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, Երևան, 1964:

ՀՄ, ԲՀ—Հովհաննես Շիրազ, Քնար Հայաստանի, հ. 2, Երևան, 1964:

ՇԻՐՎ., ԵԺ—Ալեքսանդր Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1959:

ՍԶ, ԵԺ—Սահփան Ջորյան, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964:

ՍԿ, ԽՀԲԳ—Սիրվա Կապուտիկյան, Խճանկար հոգու և քարտեղի գույներին, Երևան, 1976:

ՎՏ—Վահան Տերյան, Երկեր, Երևան, 1956:

ДУБЛЕТНЫЕ ФОРМЫ СКЛОНЕНИЯ ОТГЛАГОЛЬНЫХ СУЩЕСТВИТЕЛЬНЫХ С СУФФИКСОМ -ուի В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АМАЛИЯ САРҚИСЯН

Резюме

Дублетные формы отглагольных существительных с суффиксом -ուի выступают в родительно-дательном и инструментальном падежах.

На основании статических данных удалось выяснить, что из дублетных форм родительно-дательного падежа преобладает традиционная форма на-ան, хотя форма на-ի проявляет тенденцию к распространению. Обе формы нормативны однако имеют разную стилистическую значимость, а в некоторых случаях обладают смыслоразличительной функцией.

Из дублетных форм инструментального падежа в языке науки сохраняет активность традиционная форма на-ը, а в языке художественной литературы преобладает форма на-ով. Обе формы равнозначны и одинаково нормативны.